ARMENIA, Journal en langue Arménienne, fondé à MARSEILLE en 1885.

ԱՐՄԵՆԻԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ամբողջ 26րդ շրջանի բաժանորդագինն է 20 Ֆրանք. Թիւրքիայի և Պարսկաստանի համար 10 Ֆրանք, ԿԱՆԽԻԿ։ Կարելի է նաև բաժանորդագրուիլ քանի մը համար որ ուզուի, ամէն մէկ ամսականը 2 Ֆր. (Թիւրքիայի և Պարսկաստանի համար 1 Ֆր.) հաշուելով։ Նամակ և ծրար պէտք է ղրկել այս հասցէով. M. PORTOUKALIAN
Directeur du journal *Arménia*
MARSEILLE (France)

ԻԶ ՏԱՐԻ
Թիւ 22
1911 ՄԱՐՏ 8 Դշ.
(Հ. Տ. Փետրվար 23)

ՊԱՅՄԱՆՆԵՐ
Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ ամբողջովին կը հրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։ Պարտաւոր չէ վերադարձնել չհրատարակուած ձեռագիրները։
Ծանուցումներ կընդունուին հայերէն և Ֆրանսերէն լեզուով.
Ծանուցման 1 միջակ տողը 1 սանթիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանթիմ.
Les annonces, en français et en arménien, sont reçues au bureau de la Rédaction : Place Alexandre-Labadie, 17.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ամերիկայի առաջնորդութիւնը. — Ամենայն Հայոց հայրապետութիւնը եւ Հայաստանեայց եկեղեցին. — Կաթողիկոսական ընտրութեան փութացումը. — Նամակ Թիւրքիայէն (Կ. պոլիս). — Հայեր ի Ռուսիա. — Հայեր ի Հնդկաստան. — Ղուկասեանի կտակին շուրջ. — Հայ ուսանողներ. — Ֆրանսայի նոր նախարարութիւնը. — Ամերիկա գաղթական տանող յունական շոգենաւի մը դէպքը. — Թիւրքիայէն լուրեր. — Արտասահմանի լուրեր. — Փոքրիկ սուրհանդակ. — Ծանուցումներ.

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ

Ամերիկայի հայ գաղութին համար նոր Առաջնորդի մը ընտրութեան գործին մղում տալու շարժում մը երեւան եկած է այժմ։

Միթէ՞ այդպիսի գործողութեան մը յարմար ժամանակն է հիմա։ Ատոր պատասխանն ունենալու համար պէտք է նկատի առնել հետեւեալ հանգամանքները։

Ամերիկայի թեմը Ամենայն Հայոց կաթողիկոսութեան կը վերաբերի և ոչ թէ Կիլիկիոյ կաթողիկոսութեան։ Արդ, Էջմիածնի կաթողիկոսական Մայր-Աթոռը թափուր է այժմ և մինչև նոր կաթողիկոսի մը ընտրութիւնն ու օծումը տարիէն աւելի ժամանակ պէտք է։ Եթէ նոյն իսկ Ամերիկայի Հայերի Երեսփոխանական ժողովը ելնէ ընտրէ իրեն առաջնորդ մը, ո՞վ պիտի վաւերացնէ այդ ընտրութիւն և իր կոնդակով իշխանութիւն տայ ընտրուածին առաջնորդական պաշտօն վարելու քանի որ կաթողիկոս չկայ։ Արդեօք ընտրութեան համար այժմ աճապարողներն ի՞նչ խորհած են այդ մասին։

Թուցէ այդ աճապարանքի մէջ ժամավաճառութիւն համարուած է մինչև անգամ նախ հետաքրքրուիլ և իմանալ թէ այս նկատմամբ եկեղեցական վարչական օրէնքներն ու սովորութիւններն ի՞նչ են և այնուհետև սկսիլ այս կամ այն թեկնածուի համար աշխատիլ որպէս զի անոր ընտրութիւնը օրինական արգելքների չհանդիպի։ Օրինակի համար, մենք տեսանք Պոսթընի հայ թերթի մը մէջ այնպիսի գրուածներ ուր նոյն իսկ այժմէն սկսած են « առաջնորդնիս » անուանել Գեր. Մուշեղ եպ. Սերոբեանը, առանց նկատի առնելու թէ նա իբրև Կիլիկիոյ Կաթողիկոսէն ձեռնադրուած եպիսկոպոս մը՝ օրէնքով չկրնար ուղղակի Էջմիածնէն կախում ունեցող թեմի մը մէջ առաջնորդական պաշտօն վարել։ Իրաւացի՞ է թէ անիրաւ այդպիսի խտրութիւն մը. այդ կէտը քննելու մասին չէ խնդիրը. օրէնք մը կամ աւանդական սովորութիւն մը որ օրէնքի ոյժ ստացած է, գործադրելի է մինչև պաշտօնապէս փոխուիլը. ապա թէ ոչ ամէն մարդ ալ կրնայ ելնել իր ուզածը ընել ապօրինաւոր և անկանոն կերպով և ըսել թէ ինք այդ օրէնքը իրաւացի չհամարիր։ Այդպէս կը տիրէ անիշխանական վիճակ մը։

Ամէնքին յայտնի է որ նոյն իսկ Վարժապետեան Ներսէս եպիսկոպոս Կիլիկիոյ Կաթողիկոսէն ձեռնադրուած լինելուն համար, իր ազդեցիկ կուսակիցների փափաքին հակառակ չկրցաւ պատրիարք ընտրուիլ մինչև որ գնաց Էջմիածին և եպիսկոպոսական սովորական ուխտագիրն ստորագրելով յանձնեց Գէորգ Դ. Կաթողիկոսին և անոր օրհնութիւնն ալ ստանալով ընդունուեցաւ Էջմիածնի եպիսկոպոսների շարքին մէջ։

Չէ՞ որ նորոգ հանգուցեալ Մատթէոս Բ. Իզմիրլեան կաթողիկոսն ալ, երբ Ամերիկայի առաջնորդութեան համար ընտրելիների եռանուն ցանկ մը իրեն ղրկուած էր որի մէջ Մուշեղ եպիսկոպոսի անունն ալ կար, ջնջած էր անոր անունը, առարկելով թէ ան թո՛ղ երթայ Կիլիկիոյ մէջ պաշտօնավարէ ուր եպիսկոպոսի կարօտութիւն կայ։ (Միջանկեալ կը յիշեցնենք որ Մուշեղ եպիսկոպոսի դատապարտութեան վճիռը կայսերական իրատէով մը ջնջուած է Դուրեան պատրիարքի բարեխօսութեան շնորհիւ և վաղուց թոյլատրուած է անոր Թիւրքիա մուտքը ուր կրնայ պաշտօնավարել Կիլիկիոյ թեմերին մէջ, հաւանօրէն ի բաց առեալ Ատանան՝ գէթ բաւական երկար ժամանակի մը համար)։

Արդ, կուսակցական հաշիւներով այժմ առաջնորդական ընտրութեան աճապարել ուզող և Մուշեղ եպիսկոպոսի թեկնածութիւնն ալ հրապարակի վրայ դնողներն արդեօ՞ք բարեկամական ծառայութիւն մ'է որ կը մատուցանեն իրեն։ Եթէ հանգուցեալ Իզմիրլեան Վեհ. Կաթողիկոսի մերժածը ընտրուի Ամերիկայի առաջնորդ և այդ ընտրութիւն ապօրինաւոր համարուելով չվաւերացուի Էջմիածնէն, ի՞նչ պիտի ընեն այն ատեն։ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եկեղեցական վարչութեան իրաւասութիւնը չպիտի՞ ճանչեն, պիտի ելնեն Մուշեղ եպիսկոպոսի մը անունով պառակտումնե՞ր ծնեցունել արտասահման ապաստանած Հայաստանեայց եկեղեցիի ծոցին մէջ…։ Հերի՛ք է որ այդպիսի կուսակցական նեղ հաշիւներէ շարժող բարեկամների պատճառած յուսախաբութիւններին ի զուր զոհ գնացին Ղևոնդ վարդապետ (այժմ կարգազուրկ) Մարդուկէսեան և գժբաղդ Եզնիկ արքեպ. Ապահունին…։

Մուշեղ եպիսկոպոս որ մտաւորապէս զարգացած մէկն է, անշուշտ ինք կրնայ ըմբռնել իրեն շրջապատող հանգամանքները և այս տողերի մէջ յայտարարուած արդարացի դիտողութիւնները. հետևապէս յոյս ունինք որ ինք կը շտապէ իրեն բարեկամութիւն ցոյց տալ ուզող անխելահաններին չափազանց եռանդը։ Մենք մեր կողմէ կը մաղթենք որ Նորին Գերապատուութիւնը չստիպուի մի օր այս տխուր բացագանչութիւնն ընելու. «Ո՛վ Աստուած, դուն զիս ազատէ իմ անխելահաս բարեկամներիս և կուսակիցներիս ձեռքէն, ես ինքս կրնամ վարուիլ խելացի հակառակորդներիս հետ։»

Մ. Փ.

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Թուականը չեմ յիշեր, բայց պատանեկութեանս օրերուն տեղի ունեցած խօսակցութիւն մը թարմ մնացած է յիշողութեանս մէջ զոր կուզեմ հրապարակել Ամենայն Հայոց Հայրապետութեան աթոռին թափուր մնալուն և յառաջիկայ ընտրութեան առթիւ։

Իւսկիւտարի Ս. Խաչ եկեղեցւոյ քարոզիչ համբաւաւոր Տէր Յովհաննէս աւագ քահանայի արժանաւոր մէկ զաւակին՝ ներհուն Ֆրանսագէտ և տաճկագէտ Գարեգին էֆէնտի Փափազեանի բնակարանը հաւաքուած էին մի քանի բարեկամներ ձմեռ գիշեր մը։ Իւր աշխատութեան խուցին մէջ պահ մը խօսակցութեան նիւթ եղաւ կաթողիկոսական ընտրելի Ամեն. Մելքիսեդեկ Արք. Մուրատեանցի Զարին կողմէ չը վաւերացուելով երկրորդ ընտրելւոյն նախապատուութիւն տրուիլը, և երբ արդարացում մը Զարին այս վարմունքին՝ քննադատուեցաւ երեք նշանաւոր Հայերու կողմէ Զարին քաշուած հեռագիր մը Պետերբուրգի ռուսական դեսպանատան ամարանոցէն։ Այս Հայերն էին վարժապետ Յովհաննէս էֆէնտի Նուրեան, Խորէն արքեպ. Լուսինեան և Եղիշէ վարդապետ Այվազեան. սոյն երեք անձնաւորութիւնք Աղեքսանդր Գ. Զարին ուղղուած հեռագրով կիմացունէին որ Տաճկահայոց փափաքն էր տեսնել կաթողիկոսական աթոռին վրայ ամենայն Հայոց Հայրապետութեան թեկնածուներէն երկրորդը, Մակար Արքեպիսկոպոսի կաթողիկոսացումը Հայաստանեայց եկեղեցւոյ կարիքներուն գոհացում տրուելու տեսակէտով աւելի արդիւնաւոր համարուելուն համար և կը խնդրէին որ Զարը բարեհաճէր վաւերացնել վերջին ընտրելին։

Սոյն խօսակցութեան ներկայ եղողներէն Ներսէս էֆէնտի Ներսէսեան հարցուց Գարեգին էֆէնտիին (որ այդ միջոցին ռուս կառավարութեան կողմէ տեղւոյն վրայ Թուրք լեզուն և գրականութիւնը սորվելու համար յատկապէս Թուրքիոյ մայրաքաղաքը ղրկուած սպաներուն Թուրքերէն դասախօսութիւնը ստանձնած էր և այդ պատճառաւ ալ դեսպանատան մէջ ազատ մուտք ունէր). «Միթէ՞ ստոյգ է սոյն երեքի մասին շրջած զրոյցը»։ Թէև Գարեգին էֆէնտի ոչ հաստատեց և ոչ ալ հերքեց զրոյցը, բայց ուշադրաւ են իւր հետևեալ խօսքերը. «Մենք Հայերս սնափառ մարդիկ ենք. Թագաւորին ձին ինծի նայեցաւ տխմար փառամոլութեամբ շատ կարելի է որ ձեր յիշած անձերը այդ հեռագիրը քաշած ըլլան. դեսպանատան խորհրդականին կողմէ ճաշի հրաւէր մը կամ իբր դիւանագէտներ դեսպանին քիթը տեսած ըլլալու և ձեռքը սեղմած ըլլալու սին գոհունակութեան մը համար հաւանական է որ այդ իմաստով հեռագիր մը ղրկուած ըլլայ. եթէ ոչ, չեմ կարծեր թէ այդ անձինք կաշառուած կամ անձնական շարժառիթներով Մելքիսեդեկ Մուրատեանցի նման հռչակեալ եկեղեցականի մը հաւանական վաւերացումը վտանգելու դիտումով գործած ըլլան ։» Թէ ի՞նչ անխոստովանելի դարձուածքներ տեղի ունեցած են այս խնդրոյն մէջ, այն ժամանակուան Թունդ Մելքիսեդեկեան երեսփոխաններէն կրնայ լուսաբանուիլ որք բարեբաղդաբար տակաւին մեկնած չեն դէպի հանդերձեալ կեանքը, այսինքն Յ. Գուրգէն և Ա. Սուրէնեան էֆէնտիք իրաւեկ և ձեռնհաս են ժամանակակից պատմութեան անաչառ քննութեան ենթարկելու գիտցածնին ներկայիս մէջ ունեցած շահեկանութեան պատճառաւ :

Անցնինք Ամենայն Հայոց Հայրապետութեան համար երկու թեկնածու ներկայացնելու հակաեկեղեցական դրութեան ընդունուած ըլլալու պարագային: Այդ հակազգային դրութիւնը ընդունուած և գործադրուած է Յովհաննէս կաթողիկոսը շրջապատող խորհրդականներու անհեռատեսութեամբը որք սկզբունքը զոհած են քաղաքական երազանքներու։

Յայտնի է թէ Թադէոս և Բարթուղիմէոս առաքեալներէն հիմնուած Ս. Լուսաւորչայ աթոռը Ս. Էջմիածնի մէջ հաստատուած ատեն քրիստոնեայ ռուս ազգութիւնը գոյութիւն չունէր. հետևաբար մեր ազգային եկեղեցւոյ պետին ընտրութիւնը որ ժողովրդական ընտրութեամբ մէկ անձի վրայ միայն կատարուելու համար կանոնագրուած և աւանդաբար մեր ազգային եկեղեցւոյ ծէսերուն կարգը անցած է, ու դարեր նուիրագործած են մեր եկեղեցւոյ անկախութեան մէկ անբռնաբարելի իրաւունքը, անտեղի է որ քաղաքական նկատումներու զոհացուել տրուելու համար մեր եկեղեցական ինքնօրինութեան դարաւոր նուիրականութիւնը զոհենք և երկու թեկնածու ներկայացնենք օտար դաւանութեան մը պետին որ Հայութեան մէկ մասը միայն կը հովանաւորէ ։ Ցանուեն դարուս մէջ չերտուած կրօնական ազատութեան՝ ժամանակ է որ պնդենք մեր եկեղեցական օրէնսդրութեանց անբռնաբարելիութեան վրայ և քաղաքավար կերպով հասկցնենք Ռուսահայոց իշխող կառավարութեան թէ կաթողիկոսական ընտրութեան ձեռնարկելէ յառաջ ի սփիւռս աշխարհի Հայաստանեայց եկեղեցւոյ անդամ զաւակները պիտի ստիպուին վերստին ամենազօրեալ Ջարին բարձրագոյն ուշադրութիւնը հրաւիրել և խնդրել իրենց եկեղեցական ազատ վարչութեան բռնաբարուած իրաւունքին վերահաստատութիւնը ըստ կանոնագրութեան և աւանդութեան Հայաստանեայց առաքելական հնագոյն եկեղեցւոյ : Ինչպէս որ խաղաղասէրն Նիքոլա Բ. Ջարը եկեղեցական կալուածներուն բռնի գրաւումը դարուս քաղաքակրթութեան և քրիստոնէական սկզբունքներու ոգւոյն հակառակ գտնելով՝ Հայ ազգին հանդէպ ունեցած արդարասիրութեան զգացումը ապացուցեց և կալուածներուն վերադարձը հրամայեց ու իբր արդարասէր վեհապետ մը իւր վարկը բարձրացուց մոլեռանդ յետադիմականները խայտառակելով, կրնանք այս պարագայիս ևս ակնկալել որ եթէ չյաջողինք ազգային եկեղեցւոյ վրայ դրուած սոյն զեղծումը բառնալ տալ պաշտօնական Ռուսիոյ հետ բանակցելով, միշտ ամենազօրեալ Ջարին բարեհաճութիւնը իւր կշիռը կունենայ բառնալու համար այս նորամուտ զեղծումը:

ԳԱՅԼ ՎԱՀԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՓՈՒԹԱՑՈՒՄԸ

(Շար. 21րդ թուէն եւ վերջ)

Միթէ՞ պ.պ. յօդուածագիրների կարծիքով այս ձևի միջնորդութիւնն եղաւ «Ոտնձգութիւն Ամենայն Հայոց Հայրապետի հեղինակութիւնը սահմանափակելու...» կամ «կաթողիկոսի բացակայութեան ժամանակ փոխել կամ բացատրել պօլօժէնիայի յօդւածները...» և կամ «Հայ եկեղեցին կառավարող օրէնքների մէջ փոփոխութիւններ մտցնել և դորանով պրեցեդենտ ստեղծել...» (Մուրհանդակ No No 218 և 219.)

Միւս կողմից պ.պ. յօդուածագիրները ցանկութիւն են յայտնել՝ որ փոխանակ կաթողիկոսական ընտրութիւնը արագացնելու, ընդհակառակը Սինօդը յետաձգէր, որ ժողովուրդը ժամանակ ունենար խորհելու այլ և այլ խնդիրների մասին: Բայց չէ՞ որ պէտք է հասկանալ, որ այդ ևս օրէնքի փոփոխութիւն է, ինչպէս արագացնելու, այնպէս և սահմանուած ժամանակից ուշ կատարելու համար պէտք է բարձրագոյն հաճութիւն ստանալ, ինչպէս այդ եղել է Տ. Տ. Գէորգ Դ. կաթողիկոսի մահից յետոյ: Որովհետև Գէորգ Դ. կաթողիկոսն վախճանուել է դեկտ. 6ին 1882 թ., և հնարաւոր չլինելով ձմեռուայ պատճառով ընտրութիւնը նշանակել հետևեալ տարուայ դեկտ. 6ին՝ ժամանակի Տեղապահ սրբազանը 1883 թ. յունուարի 14ին միջնորդում է՝ Կովկասի այն ժամանակւայ Տ. կառավարչապետի պաշտօնատարին Բարձրագոյն հաճութիւն ստանալ՝ կաթող. ընտրութիւնը նշանակել ոչ թէ դեկտ. 6ին 1883 թ., այլ 1884 թ. մայիսի 27ին, պատճառաբանելով այսպէս. «Ընդամք Սինօդի ս. Էջմիածնի ունելով ի նկատի զի տարւոյ ժամանակամիջոցն յատկացուցեալ օրինօք ընտրութեան կաթողիկոսի լինի ի 6 դեկտ., որ ըստ կլիմայական պայմանաց ժամանակի դժուարութիւնս կարէ պատճառել վասն պատուաւոր հիւրոց և պատգամաւորաց, որք ունին գալ այսօր... վասն որոյ Սինօդն որոշեաց նշանակել զօր ընտրութեան ի 27 մայիսի 1884 ամի, իբրև առաւել յարմարաւոր ժամանակ. խոնարհաբար խնդրեմ զմիջնորդութիւն Ձերդ վսեմափայլութեան հայցել ընդ այս զԲարձրագոյն հաճութիւն»

Իբրև պատասխան յիշեալ միջնորդութեան 1883 թ. մարտի 23ին կովկասի Տ. Կառավարչապետի պաշտօնակատար գեներալ լէյտենանտ Ստարօսելսկին հեռագրով յայտնում է Տ. Տեղապահին, որ թոյլատրւում է կաթող. ընտրութիւնը նշանակել 1884 թ. մայիսին.

Միթէ՞ ուրեմն Գէորգ Կաթողիկոսի մահից յետոյ Սինօդի միջնորդութիւնը ընտրութեան ժամանակամիջոցն երկարացնելու համար նկատուել է օրէնքի փոփոխութիւն և կամ կաթող. իրաւանց դէմ ոտնձգութիւն. ամենևին ոչ և ոչ ոք էլ այդ մասին ոչինչ ընդդէմ չէ ունեցել, քանի որ այդ միջնորդութիւնը չէ համարւել «կաթողիկոսի իրաւանց դէմ ոտնձգութիւն» և ոչ էլ առաջ է եկել «պրեցեդենտ»։

Չէ՞ որ այժմ էլ նոյն տեսակի միջնորդութիւն է, տարբերութիւնն այն է, որ այժմ բացի ձմեռային անյարմար եղանակից՝ կայ նաև «Մեռոնի օրհնութիւնն արագացնելու պահանջ»: Դրա համար և միջնորդութիւն անում ենք ոչ թէ ընտրութեան մի տարի ժամանակամիջոցն երկարացնելու, այլ ընդհակառակն արագացնելու: Դեռ այստեղ մի կողմն ենք թողնում յիշատակելու այն կարևոր կենսական խնդիրները, որոնց լուծումն մնում է անկախ հայրապետական գահի թափուր ժամանակ:

Բայց տարօրինակն այն է, որ պ.պ. յօդուածագիրները երկիւղ կրելով թէ Սինօդի յիշեալ միջնորդութեամբ կարող է խախտուել հայրապետական իրաւունք՝ չեն քաշւում իրենք առաջարկելու Սինօդին, որ վերջինս այժմ հոգ տանի կաթողիկոս. ընտրութեան ժամանակ Ռուսահայերս ունենանք Տաճկահայերի համեմատութեամբ շատ ընտրական ձայներ: Յօդուածագիրներից մէկը պատմելով՝ թէ ինչպէս Տաճկահայերն իրենց ընտրական բազմաթիւ ձայներով համարեա ճնշում են ռուսահայոց ձայնը, աւելացնում է. «Շատ ցանկալի և միանգամայն ցանկալի կը լինէր ահա այս խնդիրը յարուցանել, բայց Սինօդը սորա մասին չէ մտածում...» (Մուրհանդակ No 218). Բայց չէ՞ որ եթէ Սինօդն այդ խնդիրները յարուցանէր, պօլօժէնիէի իսկական փոփոխութեան խնդիր հէնց այդ ժամանակ առաջ կը գայ, որովհետև պէտք է այդ դէպքում լինի Ռուսահայոց թեմերի և այլ խնդիրների փոփոխութիւնը, որ առանց ամենայն Հայոց կաթողիկոսի ոչ ցանկալի է և ոչ էլ հնարաւոր:

Ի՞նչպէս ուրեմն հաշտեցնել յօդւածագիրների այս վերջին առաջարկութիւնը նախորդ յարձակումների հետ Սինօդի միանգամայն մի անմեղ միջնորդութեան առթիւ:

Բաբգէն վարդապետ ԱՂԱՒՆԵԱՆ

ՆԱՄԱԿ ԹՈՒՐՔԻԱԷՆ

Կ. Պոլիս 13/26 Փետրուար 1911

Թուրքիոյ Հայոց Ազգ. Երեսփ. Ժողովոյ «Ազատական Կուսակցութիւնը» իւր վերջնական ծրագիրը պատրաստած ըլլալով, կը փութամ համառօտակի իւր մեծ գծերուն մէջ ներկայացնել զայն Արմենիայի ընթերցողներուն: Ազատական խմբակցութիւնը իրեն նպատակ կ՚ընդունի, օգտուելով Օսմանեան պետութեան Սահմանադրութեան հռչակումէն, աշխատիլ Հայ ազգին մտաւորական և բարոյական զարգացման և ընտրական գործին աւելի ժողովրդականացման: Վերականգնել 1860ի Սահմանադրութիւնը այժմեան պահանջներուն համաձայն, ընտրական պայմանի միջոցաւ միշտ շփման մէջ ըլլալ ժողովրդեան հետ և յանուն շինիչ աշխատանքի՝ մտնել գաղափարական պայքարի ասպարէզը, ժողովրդեան համակրանքը, քուէն և աջակցութիւնը խնդրելու համար ի նպաստ ազատական դատին: Ազգ. Սահմանադրութիւնը իւր կէսդարեան հնութեամբ չի զօրելով ալ ևս գոհացնել ներկայիս պահանջները, բարեփոխել զայն մաս մաս և կամ ամբողջովին հետևեալ կերպով:

1. Թուրքիոյ Հայոց Սահմանադրութիւնը պարտի ընդգրկել, զուտ կրօնականէն զատ, ոչ միայն Հայաստանեայց եկեղեցւոյ, այլ և կաթոլիկ ու բողոքական եկեղեցիներու յարող բոլոր Հայերուն գործերը:

2. Ամէն Հայ ընտրելու և ընտրուելու իրաւունք ունենայ, անկախ իւր վճարած ազգային տուրքի քանակէն, և ընտրութիւնները ուղղակի քուէարկութեամբ ըլլան թէ՛ Պոլիս և թէ՛ գաւառները:

3. Ընտրական շրջանակներու բաշխումը բնակչութեան թուոյն համեմատ կատարուի:

4. Ջնջել Պոլսոյ եկեղեցականներու 20 ներկայացուցիչ տալու առանձնաշնորհումը, և ինչպէս ամէն հայ անհատ, անոնք ալ երեսփոխան ընտրելու և ընտրուելու իրաւունքը վայելեն:

5. Չափաւոր թոշակով մը երեսփոխանի պաշտօնը վարձատրել:

6. Ազգային Ժողովը գումարել տարեկանին 2-3 ամիս միայն անընդհատ:

7. Ազգ. Ժողովոյ Նստաշրջանը և Երեսփոխանական պաշտօնը չորս տարի միայն ըլլայ:

8. Արդարութեամբ և յառաջատուական սկզբունքով բաշխել Ազգային տուրքը:

9. Ազգ. Ընդհ. և Գաւառական Երեսփ. Ժողովներու իրաւասութիւնները ճշդել սա կերպով.

Ա. — Կեդրոնը մշակէ և գործադրէ ընդհանուր կրթական ծրագիրը:

Բ. — Պահպանել և վարել ազգային մշակոյթի վերաբերող բոլոր կարգի հաստատութիւններ և վարժարաններ:

Գ. — Անմիջական հսկողութեան տակ առնել վանքերու վանապատկան և ազգապատկան կալուածներու բաշխումը, ազգ. ընդհ. պիւտճէի մը համաձայն:

Դ. Տարեկան հակակշռի ենթարկել ազգային բոլոր ժողովներու և հաստատութիւններու հաշիւները:

Ե. — Ազգային Ընդհանուր Ժողովը ըլլայ միակ պատասխանատու ներկայացուցիչը Օսմանեան պետութեան հետ յարաբերական խնդիրներու մէջ:

Զ. — Պոլսոյ, Երուսաղէմի պատրիարքներու և Սսոյ ու Աղթամարայ կաթողիկոսներու ընտրութիւնը Ազգ. Ընդհ. Ժողովը կատարէ:

Վերոյիշեալ վեց կէտերուն մէջ Ազգ. Ընդհ. Ժողովոյ իրաւասութիւնը սահմանափակուած ըլլալով, ատոնցմէ դուրս եղող ամէն խնդիր գաւառական երեսփ. ժողովներու իրաւասութեան տակ կ'իյնայ։

Ազատական երեսփոխաններու խմբակցութիւնը հետամուտ պիտի լինի նաև ի գլուխ բերել հետևեալ առաջադրութիւնները, հնարաւոր գործելով անոնց իրագործումը գոյ եղող օրէնքներու ուժով։

1. Անջատել Թուրքիոյ Հայոց պատրիարքարանը Պոլսոյ տեղական և վիճակային գործերէն, ու հիմնել Պոլսոյ առաջնորդութիւն մը իր գաւառական ժողովներով և զատ պիւտճէով։

2. Պոլսոյ պատրիարքութեան վարչական վերակազմութիւնը կատարել, խնայողութիւններ ընել և Պատրիարքի թոշակը 50էն 30 օսմ. ոսկիի իջեցնել։

3. Պատրիարքական փոխանորդ կարգել միմիայն ամուսնացեալ եկեղեցականներ։

4. Կեդրոնական վարչութեան խորհուրդները ձեռնհաս մասնագէտներէ կազմել։

5. Մրցումով ընտրել կեդրոնական վարչութեան բոլոր մարմինները ու պաշտօնէութիւնը։

6. Կուսակրօն թէ ամուսնացեալ, արժանաւորագոյն եկեղեցականները միմիայն առաջնորդական և քարոզչական պաշտօններու կոչել անխտիր։

7. Երուսաղէմի Պատրիարքի ընտրութենէն առաջ վերջացնել՝ միանգամ ընդ միշտ հաշուական ծանօթ զեղծումները և վտարել վանքէն յանցապարտները։

8. Ազգը շահագրգռող պետական բոլոր օրէնքները հայերէնի թարգմանել և ցրուել հայաբնակ բոլոր անկիւնները։

Կրթական։

1. Պարտադիր ընդհանուր կրթական ծրագիր մը գործադրութեան մէջ դնել, նկատի առնելով միշտ հայաբնակ վայրերու տնտեսական, ճարտարարուեստի և գիւղատնտեսութեան պայմանները։

2. Հիմնել միջնակարգ վարժարաններ, վարժապետանոցներ, գիւղատնտեսական, առևտրական և արհեստագիտական դպրոցներ գաւառական կեդրոններու մէջ։

3. Կարօտ ուսանողներու օժանդակել զանազան միջոցներով։

4. Վիճակներու կրթական հասոյթները, կեդրոնական ուսումնական և գաւառական ուսումնական խորհուրդներու իրաւունքները և դպրոցներու վիճակներն և ուսումնական կազմի իրաւունքները պաշտպանել արդարութեամբ։

5. Նպաստել հայ լեզուի, գրականութեան, պատմութեան մշակումին, տարածումին և ժողովրդականացման։

6. Հիմնել կեդրոնական և գաւառական ազգային գրադարաններ և թանգարաններ։

7. Նպաստել հայ թատրոնի զարգացման։

Տնտեսական։

1. Սահմանադրութեան 49րդ յօդուածին համաձայն, Թուրքիոյ բոլոր վանքերու, վանապատկան և ազգապատկան կալուածներու հասոյթները, ինչպէս և Սսոյ, Աղթամարայ ու Երուսաղէմի թեմերուններ ը կեդրոնական վարչութեան ձեռքը կեդրոնացնել։

2. Երևան բերել բոլոր կտակներու հասոյթները, օրինական միջոցներով ապահովել զանոնք և յատկացնել իրենց նպատակին։

3. Համազգային բոլոր հասոյթները հիմ ընդունելով՝ ընդհանուր ազգային պիւտճէ մը պատրաստել, յանձնելու համար համազգային հանգամանք ունեցող բոլոր հաստատութիւնները։ Բոլոր ազգ. հաստատութիւններու ելևմուտքի հաշուետուութիւնը տարուէ տարի հրատարակել։

4. Ազգ. գոյքերու, վանքերու և եկեղեցիներու սպասներու, հնութիւններու և մատեաններու ընդհանուր կահացոյցը պատրաստել և միջոցներ ձեռք առնել անոնց անկորուստ պահպանումին համար։

5. Հիմնել փոխատու վարկի հաստատութիւններ՝ հայ աշխատաւորութիւնը վաշխառուներու ճիրանէն փրկելու համար։

6. Հանգստեան թոշակի խնայողական սնտուկ մը հիմնել բոլոր կարգի ազգային պաշտօնեաներու համար։

Դատաստանական։

1. Ամուսնական խնդիրներու համար հաստատել դատավարական պարզ օրէնսդրութիւն մը, համաձայն Հայաստանեայց եկեղեցւոյ լայնախոհ աւանդութիւններուն ու եւրոպական օրէնքներուն։

2. Վերակազմել և ճշտել կեդրոնական ու գաւառական դատաստանական մարմիններու իրաւասութեան սահմանները։

Վերոգրեալ ծրագիրը կը կազմէ իր խոշոր գծերուն մէջ Ազգային Երեսփոխանական ժողովոյ Ազատական կուսակցութեան հետևած ու հետապնդելիք սկզբունքները։ Սոյն ծրագրէն դուրս կը մնայ Ընդհանուր ժողովոյ, անդամակցութեան և վարչական խորհրդոյ կազմական կանոնագիրը, զոր զանց կ'ընեմ Արմէնիայի ընթերցողներուն ներկայացնել, իր երկրորդական կարևորութեանը համար։

Իսկիւտար ՏԻՐԱՆ-ԹՈՐԳՈՄ

ՀԱՅԵՐ Ի ՌՈՒՍԻԱ

Բագուի նաւթարդիւնաբերողների խորհրդի նախկին ծառայող Լևոն Թադէոսեան որ 1908 թուականէն ի վեր Նովոչերկասկի մէջ բանտարկուած կը մնար «Դաշնակցութիւն» կուսակցութեան պատկանելու ամբաստանութեամբ, 5.000 ռբլ. դրամական տալով արձակուեր է։

— Ներսիսեան վարժարանի ուսուցիչներէն Դ. Խաժակ 5.000 ռբ. դրամական տալով Նովոչերկասկի բանտէն արձակուեր և Թիֆլիս վերադարձեր է։

— Կաթողիկոսական ընտրութեան համար Պոլոժէնիաի սահմանած միամեայ ժամանակամիջոցը կարճելու նպատակով Էջմիածնի Սինոդէն Բարձրագոյն իշխանութեան եղած դիմումը չէ ընդունուած։

— Մոսկուաբնակ Տիկին Վառվառա Քանանեան նամակով մը իմացուցած է կաթողիկոսարանի դիւանապետ Տ. Բագրատ վ. Վարդազարեանին թէ 30.000 ռբլ. կը նուիրէ Էջմիածնի ճեմարանին կից մանկավարժական թանգարան մը հաստատուելու համար։

— Նոր-Նախիջևանի Լոյս շաբաթաթերթին մէջ կը կարդանք հետևեալը.

«Անցեալ կիրակի (փետր. 6|19) յաջորդարանի դահլիճի մէջ մի խորհրդակցութիւն կայացաւ պետական խորհրդական Ա. վ. Պետրովի և տեղիս հայ հասարակութեան հեղինակաւոր ներկայացուցիչների մասնակցութեամբ։

Պ. Պետրովը կանգ առնելով մեր եկեղեցու ընտրողական սկզբունքների վրայ՝ այն միտքը յայտնեց, որ հայ եկեղեցին ընտրողական սկզբունք ճանաչում է միայն կաթողիկոսի վերաբերմամբ։ Թէպէտ և քահանաներն էլ են ընտրւում ժողովրդից, բայց հիմնական օրէնքների մէջ յիշուած չէ, և եթէ կառավարութիւնը հաշտ աչքով է նայում այդ բանին և նշանակութիւն չի տալիս, դա բացատրւում է նրանով, որ քահանայական պաշտօնը հայ կեանքի մէջ այնքան մեծ նշանակութիւն չունի։ Ինչ կը վերաբերի առաջնորդների ընտրութեան՝ պ. Պետրովը յայտնեց, որ նախկին երկու կաթողիկոսներն էլ այդ հարցում սխալուել են, առաջնորդների ընտրութիւնը թողնելով ժողովրդին։ Առաջնորդներին ընտրում է կաթողիկոսը և ոչ ժողովուրդը։

Այս խնդրի պարզաբանութիւնից յետոյ, ժողովը անցաւ դպրոցական խնդրին։ Պ. Պետրով դիտեց, որ Կովկասեան հայկական դպրոցները և Բեսսարաբիայի ու Նոր-Նախիջևանի թեմի հայկական կրթական հիմնարկութիւնները իրենց կառավարութեան տեսակէտից տարբեր իշխանութիւնների տակ են գտնւում. ցանկութիւն յայտնեց որ միօրինակութիւն պահպանուի և հայկական բոլոր դպրոցներն էլ ենթարկուեն լուսաւորութեան մինիստրութեան հսկողութեանը։

Ժողովականները համակրելով մի օրինակութեան սկզբունքը, յայտնեցին, որ հայկական կեանքի առանձնայատուկ պայմանների տեսակէտից՝ դպրոցների կառավարութիւնը պէտք է յանձնել հայ հոգևոր իշխանութեանը։

Ժողովի վերջում խօսք բացուեց և տեղիս յաջորդութեան մասին, որի գոյութիւնը ապօրինի է ճանաչուել այս վերջերս մինիստրութեան կողմից։ Ձեռնհաս մարդիկ յայտնեցին, որ մէջ տեղ թիւրիմացութիւն կայ, քանի որ օրէնքը (1909 թ. հրատ.) պարզ յիշատակութիւն ունի այն մասին, որ Նոր-Նախիջևանում գոյութիւն ունի յաջորդութիւն։ Օրէնքի յիշեալ յօդուածը կարդացուեց ժողովում և ստուգուեց պ.պ. Պետրովի և Գ. Ջալխուշեանի կողմից։

Պ. Պետրով անձամբ կարդալով օրէնքի այդ կէտը, խորհուրդ տուեց դիմել Էջմիածնի Սինոդին, որպէսզի վերջինս միջնորդութիւն յարուցանի նախարարութեան առաջ. ինքն էլ իր կողմից խոստացաւ նպաստել այդ միջնորդութեանը՝ Պետերբուրգ գնալուց յետոյ։

Իսկոյն և եթ այդ բովանդակութեամբ մի հեռագիր կազմուեց և ուղարկուեց Էջմիածնի Սինոդին։»

ՀԱՅԵՐ Ի ՀՆԴԿԱՍՏԱՆ

Ստացած ենք «Կալկաթի Հայոց Ճեմարանի Նախկին Աշակերտների Միութեան» 1910ի տարեկան տեղեկագիրը որ Ա. տարեկան տեղեկագիրն է — Միութիւնը հիմնուած լինելով 1909 դեկտեմբերին — և ներկայացուած է Միութեան Ընդհանուր ժողովին, 1911 յունվար 27ին։

Այդ տեղեկագրէն կը քաղենք հետևեալ տեղեկութիւնները։

Ընկերութիւնն ունի այժմ 55 անդամ, որոնցմէ 10ը մշտական անդամ են և մնացածները սովորական անդամ։ Մշտական անդամ արձանագրուողները կը վճարեն միանուագ 200 րուբլի, իսկ սովորական անդամները ամսական 1 րուբլի։ (1)

Ընկերութիւնն այս առաջին տարին, իր հասոյթներէ փոքր մաս մը հանելով նախնական անհրաժեշտ ծախքերի համար, 2.550 րուբլի պատրաստ դրամ ունեցեր է որ %ին 4 տոկոսով մէկ տարիի համար պահեստի դրեր է Կալկաթի Hong-Kong and Shangaï Banking Corporation դրամատան մէջ։

Ընկերութեան նախագահը, Տիար Յ. Կ. Յարութիւնեան, որ ընկերութեան շատ օգտակար եղած էր իր հոգածութեամբ և Ճեմարանի ջաւայաբնակ նախկին աշակերտներէն մշտական անդամներ արձանագրելով, այս առաջին տարիի ընթացքին մէջ հիւանդութեան պատճառով Հնդկաստանէն մեկնած և Եւրոպա գնացած է. հետևապէս մինչև իր վերադարձը նախագահական պաշտօնը վարելու համար ընտրուած է Տիար Մեսրոպ Յ. Սեթեան։ Յետոյ, ընկերութեան պատուակալ գանձապահ Տիար Մ. Դ. Նահապետեան ևս հրաժարելով, նախագահը Տիար Մեսրոպ Յ. Սեթեան ընտրուած է պատուակալ գանձապահ և այս կերպով վարչական ժողովին մէջ բաց մնացած պաշտօնը յանձնուած է Տիար Գ. Ջ. Մարտիրոսեանին։

Տեղեկագիրը կոչ կընէ Կալկաթի Հայոց Մարդասիրական Ճեմարանի նախկին աշակերտներին որոնք ցրուած են Հնդկաստանի, Բիրմանիաի, Սոբէյոսի, Ջաւայի և Պարսկաստանի մէջ. իրենց անդամակցութեամբ աջակցիլ այս Միութեան, որի նպատակն է յարաբերութեան կապ մը հաստատել Ճեմարանի նախկին աշակերտներին և իրենց ու իրենց մայրվարժարանին միջև և միանգամայն իրենց կարողութեան չափով նիւթապէս ու բարոյապէս օգնել աղքատ աշակերտների կրթութեան ու յառաջդիմութեան գործին։

---

(1) Մէկ րուբլին գրեթէ 2 1/2 Ֆր. է.

Ընկերութեան հասցէն է Armenian College Old Boy's Union. 1, Sookeas Lane.

CALCUTTA

ՂՈՒԿԱՍԵԱՆ ԿՏԱԿԻՆ ՇՈՒՐՋ

Յայտնի է մեր ընթերցողներին որ Օրիորդ Թամարա Ղուկասեանին իր ծաղիկ հասակի մէջ և դեռ չամուսնացած մեռնելովը՝ իր հօր Աւետիք Բալայեան Ղուկասեանի կտակին զօրութեամբ իր թողած 1 ½ միլիոն րուբլի կարողութիւնը պիտի գործածուի իր անունով բարձրագոյն վարժարան մը հաստատելու Տաճկահայաստանի մէջ։

Արդ, «Բագու» ռուսերէն լրագիրը կը հաղորդէ թէ Բագուի փաստաբաններէն մէկը Մ. Փ. Ղուկասեանի կողմէն բողոք է ներկայացուցեր Թիֆլիսի շրջանային դատարանին, պահանջելով որ անվաւեր նկատուի Աւետիք Ղուկասեանի կտակը։

ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

Ամերիկաբնակ Տիար Յովսէփ Փուշմանեան Տիգրանակերտցի որ Ամերիկայի մէջ նկարչութեան արուեստին հետևելէ յետոյ այժմ ալ Փարիզի համբաւաւոր Ժիւլիէն Ագատէմիին մէջ կուսանի, իր հարիւրի չափ աշակերտակիցների հետ մրցման մասնակցելով՝ մարդկային մարմին մը նկարեր է որ առաջին մրցանակը շահեցուցեր է իրեն։ Այդ նկարն ի պատիւ նկարչին պիտի կախուած մնայ Ագատէմիին մէջ։

ՖՐԱՆՍԱԻ ՆՈՐ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Երեսփոխանական ժողովի] փետր. 24ի նստին մէջ ծայրայեղ ձախակողմի երեսփոխաններէն Տ. Մալվի հարցապնդում մը ուղղեց նախարարապետ և ներքին գործերի նախարար Տ. Պրիանին, մեղադրելով կառավարութիւնը թէ թոյլ կը վարուի կրօնական միաբանութիւններին դէմ որոնք իրենց փակուած վարժարանները կը վերաբանան իբրև մասնաւոր անհատական վարժարաններ, արտաքին երևոյթները փրկելու համար ուսուցիչները կը թողուն իրենց եկեղեցական համազգեստ և աշխարհականի պէս կը հագուին, բայց իրենց նպատակ և գործունէութիւն անփոփոխ կը մնայ։ Տ. Պրիան պատասխանեց թէ շատ մը այդպիսի վարժարաններ վերափակուած են և ուսուցիչները դատարանին յանձնուած իբրև օրինազանցներ. բայց եթէ դատարաններն առանցմէ մեծ մաս մը անպարտ արձակած են, նախարարութիւնը չկրնար ինք ճնշում բանեցունել դատաւորներին վրայ։ Եւ Պրիան պահանջեց այդ նստի մէջ որ Երեսփ. ժողովն իր քուէով յայտնէ թէ վստահութիւն ունի՞ իրեն վրայ։ Թէև մեծամասնութիւնը 24 քուէի առաւելութեամբ յայտնեց իր կատարեալ վստահութիւնը Տ. Պրիանի գործունէութեան վրայ, բայց Պրիան բաւական չհամարեց 24 քուէ միայն մեծամասնութենէն աւելի իր կողմ ունենալը և իր պաշտօնակիցների հետ խորհըրդակցելով որոշեց հրաժարական տալ։ Միայն թէ պատերազմական նախարար զօրավար Պրէօն գրէթէ յանկարծամահ եղաւ այդ միջոցին (թէև ցրտառութենէ հիւանդացած, բայց կազդուրուած էր, այնպէս որ երթալ պաշտօնատունը գտնուելու ժամադրութիւն ըրած էր այն ժամին որ մեռաւ)։ Հետևապէս նախարարութեան հրաժարական տալը յետաձգուեցաւ պատերազմական նախարարի թաղման հանդէսէն յետոյ որ կատարուեցաւ փետրվ. 27ին։ Հանրապետութեան նախագահ Տ. Ֆալիէր ցաւ յայտնելով ընդունեց Պրիանի դահլճին հրաժարագիրը և նոր նախարարութիւն մը կազմելու գործը յանձնեց ծերակուտական Տ. Մօնիսին որ կազմեց նոր դահլիճը հետևեալ կերպով.

Մօնիս Նախարարապետ և նախարար ներքին գործերի. (տէմօգրատ ձախակողմեան)

Բէրիէ դատական,

Գրիւբբի արտաքին գործերի, (արմատական ձախակողմեան)

Տէլգասէ ծովային, (արմատական ձախակողմեան)

Գայյօ ելմտական, (արմատական ձախակողմեան)

Սդիկ կրթական,

Տիւմօն հանրային շինութիւնների, (ընկերվարական հանրապետական)

Մասս առևտրական, (ընկերվարական արմատական)

Պէրդօ պատերազմական, (ընկերվարական արմատական)

Բամս երկրագործական, (ընկերվարական արմատական)

Մէսիմի գաղթային, (ընկերվարական արմատական)

Բօլ Պօնգուր աշխատանքի, (ընկերվարական հանրապետական)։

Պետական ենթաքարտուղարներ՝ Էմիլ Կօնստան ներքին գործերի, Տրուժարտէն-Պօմէց գեղարուեստների, Մալվի դատական և Շօմէ փոստի և հեռագրի։

ԱՄԵՐԻԿԱ ԳԱՂԹԱԿԱՆ ՏԱՆՈՂ

ՅՈՒՆԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒԻ ՄԸ ԴԷՊՔԸ

Նիւ Եորքէն փետրվ. 26ին կը հաղորդեն. «Աթէնաի» յունական անդրադլանդեան շոգենաւը Պրուքլին հասածին պէս, ամերիկեան կառավարութեան կողմէն ձերբակալուեցան շոգենաւին սպաները, նաւաստիներին մեծ մասը, ինչպէս նաև այդ շոգենաւային ընկերութեան գործակատարը։ Ատոնք կը մեղադրուին թէ անցած տարի խարդախութեամբ շատ մը անյարմար գաղթականներ մտցուցեր են Ամերիկա որոնցմէ ոմանք նաւաստիի կերպարանքով ծպտած են եղեր, ոմանք ալ իբրև առաջին կարգի ճամբորդներ ներկայացուած։ Այդ ապօրինաւոր գաղթականներ նաւին ներքնայարկերին մէջ կամ ուրիշ տեղեր կը պահուին եղեր, մինչև որ իրենց յայտնուելու վտանգն անցնի և կարենան դուրս ելնել։ 29 հոգի ձերբակալուած են նաւին մէջէն որոնց արձակման համար 195.000 տոլար (գրէթէ 1 միլիոն 4200 ֆրանք) գրաւական կը պահանջուի շոգենաւային ընկերութենէն։

ԹՈՒՐՔԻԱԷՆ ԼՈՒՐԵՐ

Ելևմտական նախարարութիւնը 40 պաշտօնեայներ պիտի ղրկէ Ֆրանսա, ուսումնասիրելու համար Ֆրանսայի ելևմտական նախարարութեան պաշտօնեայների կազմակերպութիւնն ու գործելակերպը։

— Մանաստըրի վալիին տուած հեռագրին նայելով, Թիւրք և յոյն զօրքեր իրար վրայ հրացան պարպած են Տօրնէնիքօնի շրջակայները։ Կռիւը մէկ ժամ տևած և մէկ յոյն զօրք սպաննուած է։

— Կ. Պօլսէն կը հեռագրեն մարտ 1ին թէ Եմէնէն տեղեկութիւն ստացուած է որ Մէնախի բերդապահ զօրքերը բարեկամ ցեղերի աջակցութեամբ յետ մղեր են իրենց վրայ յարձակող ապստամբներն որոնց թիւը 2000ի կը հասնէր։ Կռիւը տևած է 30 ժամ։ Թիւրք զօրքերէն և իրենց բարեկամ արաբ ցեղերէն 71 հոգի ինկած են կռուին մէջ. ապստամբներէն 130 հոգի։

— Գուզկունճուգի մէջ (Կ. պօլիս) հրդեհ ծագելով, 4 ժամէն աւելի տևեր է և 200էն աւելի շէնքեր հրդեհին ճարակ եղեր են։ Մեծ մասը հրեայների բնակարաններ էին։ Հայերի եկեղեցիի փողոցին մէջ 6-7 Հայերի տուներ այրուեր են. եկեղեցին անվնաս մնացեր է։ Անպատսպար մնացած հրեայ ընտանիքներն իրենց կրօնակիցների կողմէն պատսպարուեր են։ Կառավարութիւնն ալ ուտելիք և օգնութիւն փութացուցեր է կարօտեալներին։

— Պաղտատի երեսփոխան և «Թանինի խմբագիրՊապանզատէ ԻսմայիլՀագգը պէյ կրթական նախարար նշանակուած է։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Բէդէրսպուրկէն կը հաղորդեն թէ նախարարութիւնն ընդունեց Մոսկուայի համալսարանի 12 դասախօսների հրաժարականը։ Կրթական նախարարի հրամանին համեմատ, հարիւրաւոր ուսանողներ արտաքսուեցան Ռուսիայի զանազան քաղաքների համալսարաններէն, վերջին խռովութիւններին մասնակցած լինելնուն համար։

— Ռուսիայի և Չինաստանի միջև քիչ մնաց որ ընդհարում մը պատահէր։ Կենթադրուէր որ Ճափոն կը դրդէր Չինաստանին։ Ռուս կառավարութիւնը տեսնելով որ չինական կառավարութիւնը դաշնագիրներով իր ընդունած պարտականութիւնները կատարելու կը դժկամակի և Մանչուրիայի մէջ ռուսերի ապահովութեան և առևտրական զարգացման դէմ արգելքներ կը հանէ, վերջնագիր մը ղրկեց անոր։ Բարեբաղդաբար Չինաստան փութաց պատասխանել զոհացում տալով Ռուսիային, ապա թէ ոչ մեծ աղէտ մը պիտի լինէր այդ երկրի համար որ արդէն տարափոխիկ հիւանդութիւններով կը կոտորուի, եթէ պատերազմն ալ ըսկսէր աւելցնել կոտորածը։ Ռուսիա թէև առ այժմ գոհ եղած, բայց աւելի գրական ապահովութիւններ կուզէ ունենալ չինական խոստումների գործադրութեան համար։

— Օտէսաէն կը հեռագրեն մարտի 6ին թէ ժանտախտէ բռնուած 2 հիւանդներ տակաւին կը դարմանուին Օտէսայի մէջ։

ՓՈՔՐԻԿ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Ալեքսանդրիա. Յ. Ղ. — Շնորհակալութեամբ ստացուած է 40ֆր.ը։

Կ. պօլիս. Գ. Դ. — Կը հարցնէք մեզ թէ ինչո՞ւ համար մենք «Եմէն» կը գրենք և ոչ թէ «Եէմէն»։ Մենք ալ ձեզ կը հարցընենք թէ ինչո՞ւ համար դուք «Երուսաղէմ, Եգիպտոս, եղաւ, եկաւ» կը գրէք և ոչ թէ «Եէրուսաղէմ, Եէգիպտոս, եէղաւ, եէկաւ» և այլն քանի որ և գիրը միևնոյն հնչումն ունի բառին ըսկիզբը։ Իսկ թէ ինչո՞ւ համար մենք «Արմէնիա» կը գրենք և ոչ թէ «Արմենիա» ինչպէս կը գրեն ոմանք, այդ մասին թերևս առանձին յօդուածով մը գրենք, նիւթ ունենալով հայերէն տառերի ճիշդ հնչումը և անոր կրած ինչ ինչ փոփոխումները։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

ՀՈՐԻԶՈՆ

(Երրորդ տարի)

Գրական, հասարակական
և քաղաքական օրաթերթի

ՀՈՐԻԶՈՆը արտասահմանում արժէ՝

	Տարեկան	6 ամսուան
Ռուսաստան	10 ռ.	5 ռ.
Թիւրքիա	120 ղրշ.	70 ղրշ.
Ամերիկա	6 դօլ.	3 1/2 դօլ.
Եւրոպա	30 Ֆր.	18 Ֆր.

«ՀՈՐԻԶՈՆ»ի հասցէն՝ Rédaction Horizon».

Tiflis (Caucase-Russie)

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐ

(Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԷՆ ԱՌՆՈՒԱ
ՄԻ ԻՐԱԿԱՆ ՎԷՊ)

ԳՐԵՑ ԱՊԼՂԱՐԻՊ

Այս հետաքրքրաշարժ գրուած ներկայացունէ ընտանեկան տխու պատկերներէ մին ուր կը տեսնուի թ տիրաբրոյական մի հայր իւր տղակ ուած վարքուբարքով որչա՜փ չարիք ների պատճառ դարձած է և վեր վերջոյ ինք ալ իւր որդու ձեռք սպաննուած և անհետացած է խարհէ։ Գին 1 ֆրանք։

Բակուրան. Կիպրոս կղզի (Ա. Ա խարհագրական և պատմական տեսու թիւն։ Բ. Հայ գաղթականութիւն)

1 Ֆր.

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

ՄԱՐՍԷՅԼ
Հայերէն տպարան Մ. Փորթուգալեան
Le Gérant : François CARRIERE
Marseille. — Imprimerie du Midi